

չուծեամբ, եւ կեղեքմամբ զբնին եւ կողպտեին, եւ հաւատոց կուռնութիւն առնէին, եւ այլ բազում առաւայանք շարշարէին, ոչ միայն զազգս Հայոց, այլ եւ զազգն Վրաց եւ զմահմաականաց, եւ վասն այնք ներութեան գնացին առ թագաւորն Պարսից զի թերեւս նոյաւ զգիւրութիւն ինչ գացեն զերծեալք ի նառայութենէ Օսմանցոցն ։

Այդպիսի դրութեան մէջ գտնուող ժողովուրդը միջոց չուներ մոռանելու թէ արդեօք նրա ցաւերը չթփթեւանան Օսմանցոց ձեռքից Պարսից ձեռքն ընկնելով ։

(Հարսնութիւն)

4. ԱՌԵՔԵՆԵՄԵՆ



ԵՆԴՈՐԵՐԹՈՒԳՈՍԵՆԻԷ Ի ՋՈՒՐ ԳՆԵՆ ՄԸ ԺԱՆՐԵ- ՐԵՆՈՒԹԻՒՆՆԵՐԷ ԱՅՏՈՍԵՆՈՒ ՎԸ ՋՄԵՆ

(Հարսնութիւն)

Քանի մ'որ ետքը քաղաքաբաշխութիւնը պատգամաւորաց — Յուլիս 22ին ծանուկովը — ինդրաւիշակոյ որ իշխանութիւնը կը խրէ, ու կը հրամայէ անոնց որ ինչ որ որոշած, ու զիրենք անոր վրայօք վերջին նամակին մէջ տեղեկացուցած է, հաստատուն պահեն ու գլուխ հանելու ջանան։ Հաստատութիւնն ու իրեն հետ բոլոր ազգէն, այնչափ ժամանակէ ի վեր կը սպասէ որ իր հաւատարիմ ծառայութեանը համար բնիկ ըլլալը ձրի շնորհուի։ Ըս շնորհունքին համար 2000 ոսկւոյ նուիրումն ընելով՝ կ'ուզէ որ օրինաց մէջ անցուի այս բանս ապագայ յիշատակին համար։ Եթէ երկիրն այս բանս ընդունի — կ'ըսէ — մեզի մեծ ուրախութեան պատճառ կ'ըլլայ, եւ ապագայի համար գովելի բան։ Այլազգ՝ խոստումը չենք կրնար ընել։ Նկատմամբ սակագոյն (taxa) — կը շարունակէ հրահանգը, — կը յայտնենք որ եթէ երկիրն զմզէ աւտով ծանրաբեռնել ուզէ՝ կայսեր կը գիմենք։ Եւ բաց անէ՞ որ բեռը չենք ընդունիր՝ կը յայտնենք նորէն, որ յիսուն տարւան միջոցի մէջ 300ական ֆիորին զձարելու բերք — եթէ որ աւրիշ տիտղոսով կ'երկի զաւկըներ կամ բնիկ տեղացի չենք կրնար ըլլալ՝ չենք ընդունիր։ Աւերի պատրաստ ենք մեր առանձնաշնորհութեանց մէջ ձեռլու, քան այդ փորձանքներն եւ մեր յաջորդներուն համար ֆէասակոյ բաւին մէջ մտնելու։ Ուստի եւ այս՝ — մեր կորստեան վտանգովն — ոչ ինչ համարելի առաջարկութեան վրայ եւ ոչ ալ կ'ուզենք որ խօսք ըլլայ։ Մեզի աւերի պատիւն եւ համար, խոստացած 12.000 ֆիորինի նուէրը հիմակ այլ կը հաստատենք։ Ասկէ աւերի

— մեր արտօնութեանց կոնդաւններուն հակառակ — բան՝ ոչ կը խոտանանք եւ ոչ ալ կ'ընդունինք։ — Գործքին մէջ յապարհում չըլլալու համար, իշխանութիւն կու տանք ձեզի, որ 600 ֆիորին ալ փոխ կարենաք առնուլ։ Սակայն ինչ որ ըլլա՞ւ քաղաքաբաշխութիւնն առնէ բանի վրայ՝ միշտ յառաջունքն տեղեկացուցէք, որպէս զի հասարակաց լաւութիւնը, հաստարակութեան ընդհանուր կամօքն ըլլայ։

Ինչպէս քիչ մը ետքը տեսնելու առիթ պիտ'որ ունենանք, տէրութեան զարգեան ու ազգայինը չկրցան զիրար գտնել։ — Հայերն, իրենց վաղեմի արտօնութեանցը վրայ յենլով, կը համարէին, որ բնիկ ըլլալով, ազատ թագաւորական քաղաքացի կարգը բարձրանալով եւ տէրութեան աւագաժողովին մէջ ալ տեղ ունենալով կրնան վայելիլ նաեւ այն ապահարկութիւններն, ապտուութիւններն եւ արտօնութիւնները, զորոնք տանն առնէ Ասորից կայսրերէն ընդունած էին։ — Ճիշդ ասոր հակառակ, տէրութեան զարգերը կը համարէին որ ալ ազգային ուրիշ ամէն ազատ թագաւորական քաղաքացի պէս, ընդհանուր սովորութեան համեմատ իրենք զիրենք հասարակաց ծանրաբեռնութիւններէն դուրս չեն կրնար հանել։ — սովորական սակը՝ պէ՛տե՛ծ որ հետուցանեն, զնուոր պահեն, նախաճոյքի ծառայութիւն ընեն, առքը առն եւ այլն։ Մինչեւ որ ասոնք չգործադրուին՝ — կ'ըսէին զարգերը — Հայք, սովորեալ երգման չեն կրնար ընդունուիլ։

Այս վիճակին մէջ էին իրենք երբ 1794ին, Սեպտ. 8ին, Վերլայի ու Եղիսաբեթուպոլսոյ պատգամաւորներն աւագաժողովին՝ երթալով՝ ըստ սովորութեան նախագահին ներկայացան ու իրենց ընտյութեան թղթերն անոր մատուցին։ Ինչորած տեղեկութիւններն ընդունելէն ետեւ, հաջորդեցին իրենց խորհրդածութիւններն ու յառաջ բերին իրենց պատճառները։ Բաց սակէ ուրիշ մեծամեծաց ու հեղինակութիւն ունեցող անձինքներու երեւալով ինչդրեցին անոնց օգնութիւնն ու պաշտպանութիւնը։ Ինչպէս գրած տեղեկութիւններէն կ'երեւայ, ոչ որ թողոց զիրենք առանց մխիթարութեան ու քաջալերութեան։ — Ապահովագլուխ չենք գիտեր, կ'ըսեն Եղիսաբեթուպոլսոյ երեսփոխաններն, որ կառավարութիւնը մեր յատակագիծը, շիտակ կայսեր պիտի խրկէ, չէ նէ՛ նախ զարգերուն պիտի հաջորդէ։ Այնչափս իմացանք, որ զարգերն ամենեւին բան մը չեն գիտեր անոր վրայօք, թէ կայսրը 1792ին հրամանագրովն ինչորած է, որ

մեր կրկին ծանրաբեռնութիւններուն նկատմամբ կառավարութիւնը յատակագիծ մը շինէ։ Թեպէտ լսեցինք, որ կառավարութեան գործընթացումը ծրագիրը չինել, յատակագիծն առանց կարգերուն հաղորդելու՝ շինակկայսեր պիտի խրկէ։

Երեսփոխանները կը ծանուցանեն քաղաքաշինութեան նաեւ, որ աւագաժողովին մէջ, պատգամաւորաց ցանկը կարգադրուելով՝ իրենք անոր մէջ անցուած էջին։ Թեպէտ աւագաժողովին նախագահ ըստ կարգի զմէջ յառաջ բերուի, բայց թէ Տրամանին համաձայն երկու քաղաքներուն պատգամաւորները ժողով ներկայացան ու երգում ընել կ'ուզեն։ Այսու ամենայնիւ այնպէս եղաւ որոշումն — որն որ արձանագրութեան մէջ ալ անցաւ — թէ արքունական գործակալին գործն ըլլալով՝ աւագաժողովը բանալ, երբ որ արքունական առաջարկութիւնները լինան՝ մեր խնդիրը ձեռք պիտի առնուի։ Քանի մը նիստ արքունական առաջարկութիւնները կարգաւորել եւ նոր օրէնքներուն ու ամրոշակներուն հրամանագրին հրատարակութեան անցաւ։ Նախագահը մեզի խոստացաւ, որ այս շարժումն մէջ մեր երգումը պիտի ընդունի։ — Ըսոր ձեռին նկատմամբ արդէն սուներ գտնուած աստեղիտ, առարկայս ունենալով որ չըլլայ թէ այնպիսի բան մ'ըլլայ, որով ձեռաւոր նիս կ'ապրի եւ մեր գործընթացը չկարենանք յառաջ տանիլ՝ անոր որպիսութեանը վրայ տեղեկութիւն տուինք։ Կը յայտնենք Հրամանագր, թէ ուրիշ երգում պիտի չընենք, եթէ ոչ՝ միութեան երգումը. որով՝ եթէ մեր գործընթացը հոս չյաջողի, կայսեր ոտքն ինչալու չենք արգելուրի։ Մանաւանդ, որ Նախ, մեր բանը ծանրաբեռնութիւններէն ազատելու ընթացքին մէջ է։ Երկրորդ, որ հասարակութիւնն իր ընծայութեան թղթին մէջ այս բանն իրեն վերապահած է, երբ որ ըսած է թէ՝ «անվերապա պահելով իր ձեռնպահութիւններէն տրուած ասանձաշնորհութիւնները», Այս սահմանաւորութիւնը խոցով նախագահին ալ ըսինք։

Առարկայս մոռընիդ կու գայ, որ 1791ին, Հասարակութեան անուամբն աղերսագիր մը գրեցինք կարգերուն։ Ըսոր մէջ ան ըսուեցաւ որ, թէ որ զմեզ այդքնանածն ընեն, մեր երախտագիտութիւնը ցուցնելու համար 2000 ոսկի կու տանք, հունգարական լեզուին յառաջանան ու մշակութեան համար։ Արդ բաղձալիկն կատարեցին։ Մէկ երկու հոգեւոր երթալով, ի մէջ այլոց հարցմանը ըրին մեզի, թէ խոստացուած 2000 ոսկին բերի՞նք հետեւե-

նիս։ Մենք պատասխան չկարենալով տալ, կատարով մ'ըսինք թէ։ Ան որոմը, դեռ փոքրանոցին մէջ է։ Ուզեցինք այս բանն Ձեզի հաղորդել, անոր համար որ զմեզ տեղեկացընէք, թէ ինչ ընելու ենք. որովհետեւ մեզի տրուած հրահանգաց մէջ ասոր վրայ խօսք չկայ։ Կրնայ ըլլալ որ երգման կանչուած աստեղ խոստացուած 2000 ոսկին ուզեն։ Մենք ասոր նկատմամբ Ձեզմէ յանձնարարութիւն չունենալով՝ ուրիշ պատասխան պիտի չկարենանք տալ, եթէ ոչ՝ որ այս բանիս վրայ իշխանութիւն չունենալով՝ բանը քաղաքաբաշխութեան պիտի ծանուցանենք։ — Ուստի շնորհք ըրէք, յաղորդներուն միտ գրէք։

1. Հասարակութիւնն իւր այս խոստումն ըսած է թղթով, որ կարգերուն ձեռքն է։ Եւ արձանագրութեան մէջ ալ անցուած է։
2. Այս խոստումն եղաւ պարտաւորութիւն։
3. Եթէ որ հասարակութիւնն այս բանն չկատարէ, կրնայ ըլլալ որ կարգերն — որոնք անանկ ալ մեզի շատ հակառակ են — զմեզ բոլորովին փնջընեն, եւ ասանկով անոնց ջանքն ալ, որոնք սըրտանց մեր գործին ետեւէն ինչած են՝ պարագի ելլէ։
4. Հասարակութիւնը մեր ազատութիւններուն նկատմամբ՝ գաւառական գործակատարին շինած ծրագրին դիտողութիւններուն համաձայն, այն խոստումն յաջորդ խօցեցրով կը հաստատէ։ Մեզմէ տրուելու 2000 խաչերական ոսկիէն զատ՝ 1500 ոսկի ալ կը նուիրենք ծանրաբեռնութիւններէն ազատելու համար։ Թեպէտ աղաչանաց թղթին մէջ այն պայմանը դրուած է, որ ան թեւութեամբ կը խոստանանք, որ կարգերն զմեզ մեր ասանձաշնորհութիւններուն մէջ պահեն։ Մենք ասոր նկատմամբ ասի ի բերան պիտի չկենանք։ Բայց մեր յայտարարութիւնն, եւ ան թէ իրերը Ձեզի պիտի հաղորդենք, արդեօք տեղի պիտի ունենան։ Ընստոյգ է, թէ մեր բանը հիմակ պիտի որոշուի կամ ի լաւն եւ կամ ի չաւրն։ Ո՞րն ալ որ ըլլայ, յաւիտեան անոր մէջ պիտի մնանք։ Այս բանն անոր համար աւելանիդ կը գնենք, որ յամենայն դիպուածս պատրաստ ըլլաք։ Բայց նաեւ անոր համար որ հիմակ ըլլալով յարմար ժամանակը, թէ որ բանն այնչափի գայ՝ չբաշխուի ու եւ չկենանք, որ չըլլայ թէ յարմար առիթը փախցուցած ըլլալու ցաւերը յաւիտեան կրելու ստիպուինք։ Կրնայ ըլլալ, որ այս մեր խոստմանը վրայ ասօք չըլլայ, զոր մենք ալ կը բաղձայինք։ Բայց անք բանի պատրաստ ըլլալն աղէկ է։

Եւ որովհետեւ պատգամաւորներն իրենց նամակին վերջը կը խնդրեն քաղաքաբաշխու-

թեմէն որ ձեպընթաց տուհանդակով պատասխան տայ, հասարակութիւնն առաջին թղթատարաւ անոնց պէտք եղած տեղեկութիւնները կու տայ: — «Գրութիւննոր ընդունելով կ'ուզենք մանաւանդ նուիրման նկատմամբ Ձեզի հաղորդել թէ ինչ կերպով ընելու էք: Թաւառական ազատ քաղաքաց կարգի անցուած ըլլալն եւ պարզեմունտութիւն ընդունելուն համար, որպէս զի մեր երախտագիտութիւնը ցուցնենք, հունգարական լեզուին յառաջացմանն ու մշակութեանը համար 2000 ոսկի խոստացանք: Երկրորդ՝ արքունական գործակալին գիտողութիւնները՝ քաղաքաբարձութեան հաղորդելով՝ խոստացած էինք 2000 ոսկին զատ, 1500 մին ալ՝ հասարակաց ծանրաբեռնութիւններէն ազատ ըլլալու համար: — Լուսպիտի գիտնաք, թէ այն 2000 ոսկին 1791ին, թէպէտ հունգարական լեզուին մշակութեան եւ յառաջամար համար առաւել խոստացած էինք. բայց այն պայմանաւ, որ մեզի տրուած ամէն աւանանշանորհութիւններն անվճար պահուին: Կը կարծենք, թէ մէկալ 1500 ոսկւոյն վրայ եւ ոչ յիշատակութիւն պիտի ըլլայ, որովհետեւ Կարգերուն խոստացուած չէ, հապա գործակալութեանն գիտողութեանը չլայք՝ կառավարութեան: Ուստի հասարակութիւնը Ձեզի կը յայտնէ, որ ի գիպուածի թէ երբուք ընելու ժամանակ, զձեզ ստիպեն, կամ որ եւ ինչ կերպով սեղմեն, որ ըրած խոստումնիս նորոգենք. Ձեզի իշխանութիւն կու տամք: 2000 ոսկւոյն նկատմամբ Կարգերուն յայտնէք, թէ գրով կ'ուզէք պատասխան տալ: Եւ պատասխանն մն պիտի ըլլայ, որ մեր հասարակութիւնը չէ՛ թէ 2000 միայն՝ հապա 3500 ոսկի խոստացած է, զոր հիմակ ալ կը նորոգէ, բայց այն ապահովացուցմամբ, որ որովհետեւ արդէն ծանօթ օրինաց համեմատ պէտք պիտի ըլլայ որ նոր արտօնագիր ընդունինք, ուստի հին աւանանշանորհութիւններուն կետերն իրենց ամբողջութեանը մէջ մնան: Ընդ հակառակն, թէ որ երբուք ընելու տանելը չախշն այս խոստումն, այն ատեն հասարակութիւնն իրեն կը վերապահէ, որ առանց իր գիտութեանը բան մը չընենք: Եւ Ձեզի իշխանութիւն չի տար, որ երբուք ընելէն ետքն առանց քաղաքաբարձութեան գիտութեանն այս ծանրաբեռնութեան նկատմամբ բան մ'ընենք. որպէս զի ըլլայ թէ երբնականութիւնը գտնելու փոփաւքած ատեն, մշտնջենական լուծը վերցնիս անցնենք: Ուստի երբ ալ հասարակութեան գործքը ձեռք առնուի, ինչ որ գիտնաք ու տեղեկանաք,

անմիջապէս մանրամասն ամէն բան մեզի ծանուցանելու բարի հաճեցէք: — Պարգեւներուն կողմանէ, որովհետեւ յայտնի է թէ անիւն ալ առանց օծուելու չի քայլեր, անոր համար ուր որ Կերլացիներուն հետ՝ կը տեսնէք պարգեւի հարկաւորութիւնը, իշխանութիւն կու տանք Ձեզի, զայն բաշխելու, զոր հասարակութիւնն ալ իւր ժամանակին պիտի հաստատէ:»

Միտս, որ այս նիւթին վերաբերալ շատ մը կարեւոր արձանագրութիւններ ու պաշտօնական նամակներ կորսուած աներեւոյթ եղած են: — Ան պատճառաւ չենք կրնար ըսել, թէ ինչ վախճան ունեցաւ, ազգայնոց՝ երբման եւ մանաւանդ ծանրաբեռնութիւններէն ազատելու նպատակաւ հունգարական լեզուին յառաջացմանն ու մշակութեանը համար խոստացած 2000 եւ 1500 ոսկիներուն խնդիրը: — Թէպէտ, ինչպէս յարկը յօդուածին մէջ յառաջ բերելի դէպքերէն ու պարագաներէն պիտի տեսնենք՝ — որովհետեւ թէ կառավարութիւնն եւ թէ Կարգերն ու վիճակները, ամենեւին չուզեցին զնոյնիկ, որ Եղիսարեթութեւոյսց ազգայնաց ազատ ըլլան, ի մասնաւորի՝ զինուորաց բնակութիւն տալու եւ սոյլըրդութեան ծանրաբեռնութեանն: — Հայերն ալ պնդած մնացին իրենց դրած պայմաններուն մէջ. ու 3500 ոսկւոյն խոստումն ալ՝ ինչպէս կը կարծենք, մնաց միայն խոստում ու թղթի վրայ:

Եղիսարեթեւոյսց ազգայնաց՝ յենլով իրենց շնորհուած ազատութեանց ու արտօնութեանց հրամանագրիներուն վրայ. կը պահանջէին որ քանի մը հասարակաց ծանրաբեռնութիւններէն, ի մէջ այլոց, իբրեւ արքունական կալուածոց երկրատէր ու ազատ ազնուականք՝ տուրք վճարելէ — դարձեալ՝ զինուորաց տուն՝ ու տեղ տուրք (quartier), ինչպէս նաեւ նախամոլքի ծառայութեանն (Vorspann) ազատ ըլլան: Մասնաւոր այս երկու վերջին արտօնութեան նկատմամբ շատ բան ունեցած է աւերութիւնն ու աւագածողութիւնը Եղիսարեթեւոյսց հետ: Ան բաներուն վրայք խիստ յանձնաւոր մէջ էին Եղիսարեթեւոյսցն իտեղութեան հետ: Ասոց նկատմամբ բազմաթիւ նամակագրութիւններ տեղի ունեցած են կայսեր, Գրանսիլուանիոյ վերին կառավարութեան եւ աւերութեան աւագածողութիւն մէջ: — Բայց ասոր պատճառաւ Հայք, նաեւ շրջապայ ազգերուն — մանաւանդ Հունգարացոց վաղեմի ժամանակէն արծարծած ատելութիւնն՝ ինչպէս պիտ'որ տեսնենք. — աւելի եւս իրենց դէմ գրգռեցին:

Ջինուոր չպահելու արտոնութիւնն, ինչպէս պատմութիւնը կը վկայէ, ուրիշ ազգայնութիւններն ալ կը վայելէին Ասորիոյ պետութեան մէջ: — Լէւորդոտ Ա. արքան 1700ին. Դրանսիականից Ալլիանց գեղը գտնուող Պուլկարներուն, այս արտոնութիւնը շնորհած էր, աւելցնելով արտոնագրին մէջ թէ, իր շնորհմունքին գէմ ոչ որ կարենայ բողբել ու գէմ դնել: Ահաւասիկ կայսերական հրամանագրին խօսքերը. «Այս մեր կայսերական թագաւորական որոշմանը գէմ, ոչ գաւառական, ոչ զինուորական իշխանութիւնն եւ ոչ ուրիշ մը, թէ՛ ուղղակի եւ թէ անուղղակի ընդգրկմանաւ համարձակի: Ասոր վըսոյք, մեր Դրանսիականից վերին զինուորական զօրապետին հարկաւոր կարգադրութիւնները առած ենք, որպէս զի զիրենք (զառկայները) յիշեալ ազատութեանը մէջ պաշտպանէ»:

Ճշգրիտ նոյն ազատութիւնը կը վայելէին միշտ ազգայինք ալ: — Այս բանն կը տեսնենք յայտնապէս Կարդու Ջ.Ի 1733ին եւ Մարիամ Թերեզիայի 1758ին առած առանձնաշնորհութեանց կոնգրաներէն:

Առաջին մէջ այս ազատութիւնները գրի առնուած են յարգ. խօսքերով. «Ջինուորաց բնակութեան տեղ եւ բնակապետ տալու, եւ ուրիշ ասանկ ծանրաբեռնութիւններ մատուցանելու նկատմամբ արժանի համարեցանք՝ որ առանցք — դուրս առնելով ամենածանր հարկաւորութեան գէպերէն» — այս քաղաքը (Եղեսաբեթուպոլիս) բոլորովին ազատ ու արտոնացեալ ընենք»:

Իսկ Մարիամ Թերեզիա Կայսրուհին իր արտոնութեան հրամանագրին մէջ այսպէս կ'ըսէ. «Ջինուորաց տեղ տալէն, զինուոր պահելու պարտաւորութենէն, դարձեալ նախաժող տալէն եւ ասոնց նման ծանրաբեռնութիւններէն այս հասարակութիւնը դուրս կ'առնուիք, եւ ազատ կը հրատարակենք»:

Աս ազատութիւններուն մէջ կ'ամրացընէ զԵղեսաբեթուպոլսիցիները՝ նաեւ Յովսէփ Բ. իր 1785ին եւ 1786ին առած առանձնաշնորհութեանց պատճէններուն մէջ, երբ — գրեթէ մի եւ նոյն խօսքերով — կ'ըսէ. «Անոնք (Եղեսաբեթուպոլսիցիք) իրրեւ հարունակ մաճառակաւութեամբ զբաղող մարդիկ, զինուորաց տեղ

տալէն ու նախամիջ ծառայութենէն եւ ուրիշ ասոնց նման ծանրաբեռնութիւններ կրելէ դուրս հանուած են. ուստի եւ ազատ կը համարուին: Որուն մէջ զիրենք ասկից ետքն ալ պահել կ'ուզենք»:

Բայց ազգայինք այս արտոնութիւնները չէրցան ցմիշտ վայելելու ժամանակները փոխեցան: — Եւ որովհետեւ յարաբերութիւններն այնպէս պահանջեցին, որ Դրանսիականից քաղաքացի ու հասարակութեանց մէջէն շարունակ զինուորներ անցնին, փոխադրուին ամէն քաղաք, ամէն գեղ, ամէն աւան, պէտք իր որ — թէպէտ քիչ ատենի համար եւ անցողակի կերպով — զինուոր ընդունէր իր տունը: Բայց ասկէ զինուորաց բեռներն ու կահ կարգաւոր իր տեղէն առաջին գեղը կամ քաղաքը փոխադրէր:

Աս հասարակաց պարտաւորութենէն, ինչպէս ըսինք Հայերն ազատ էին, ազատ ալ կը ճային աւելի երկայն ժամանակ՝ գոցէ նաեւ ցմիշտ, եթէ շրջակայ Հունգարացոց նախանն ու Նեղարտութիւնը չգրգռէր տէրութեան աւագածողը. որ Դրանսիականից կառավարութեանն այս բանս զարդեցընէր ալ:

Հայք՝ զի վախճային զինուորներէն ու նոյն իսկ զինուոր տեսնէին, ինչպէս կրակէն: — Առ այս ունէին իրենց յատուկ պատճառները: Բայց այս պատճառներն ալ չէին արժէր, կորսնցուցած էին իրենց յառաջունքն՝ որու թիւներ:

Ասոր նկատմամբ, թէպէտ խել մը տեղեկութիւն ու նամակ գացած է Եղիսաբեթուպոլսոյ քաղաքաբաշխութենէն Վիեննայի գործակալին, թէպէտ աղբսագիրները գրուած են պաշտօնականութեան եւ նոյն իսկ կայսեր. բայց ասոնք առանց հետեւութեան ճնացին: — Կայսեր գրուած աղաչանաց թղթերը՝ Դրանսիականից վերին կառավարութեան՝ եւ ասկից տէրութեան աւագածողովն՝ կ'երթային, որպէս զի ասոնք իրենց կարծիքն արբունեաց ներկայացընէն:

Արնաք ենթագրել թէ ասոնք ինչ տեղեկութիւններ կու տային կայսեր: — Անցաւ այսպէս քանի մը տարի: — Երբ Եղեսաբեթուպոլսիցիք, տեսան թէ ամէն աղաչանք անօգուտ է, այն ատեն — առանց բանը լաւ մը կշռելու — շիտակ զլուծի աւագածողովն դիմեցին: — Իրենց աղերսագրին մէջ, պատգամաւորաց ժողովոյն առջեւը գրին, թէ՛ իրրեւ թագաւորական ազատ ու առեւտրական քաղաք, հարկ է որ զինուոր պահելէն ու նախամիջ տալէ ազատ

1 Համ մատ, Կարդու Ջ.Ի 1733. Ա.գ. 11ին. եւ Մարիամ Թերեզիայի 1758 Նոյեմբ. 28ին առած արտոնագիրները: — 8եւ Հայք Եղեսաբեթուպոլսի, Ա. Հատոր էջ 85 եւ 214. Թ. 12:

1 8եւ Հոգեւ 1899 էջ 7 (Գ «Երբորդ») :

